

ՊԱՏՄԱԿԱՆ

ՀԱՅ ԳՐԻՉՆԵՐ ՅԱՏԱՆԱ

Կիլիկիոյ հայրական իշխանութեան շրջանէն Ատանայի մէջ գործող սակաւաթիւ գրիչներ միայն ծանօթ են մեզի, ինչպէս ժ. Գ. գարուն ապրող Ստեփանոս Գրիչը և Կոստանդին քահանան: Յաջորդ երեք դարերը զրկեց բոլորովին ամուլէն: Բայց ժ. Գ. գարուն երեսն եկող ընդհանուր մշակութային շարժման մէջ Ատանան ալ կ'ընծայէ մեզի ստանեակ մը զբակեան աշխատարաններ, որոնք առաւելագոյն ծիսական մատենաներու ընդօրինակութիւններ կատարած են:

Ա.— ՍՏԵՓԱՆՈՍ ԳՐԻՉ.— Ատանայի մէջ, 1244-ին, բոլորգրով օրինակած է Մմբատ Գունդատապալի համար,

1.— Յաղագս Բնութեան, Գրիգոր Նիւսացիի.— Յիշատակարանք Ձեռագրաց, Գարեգին Կթղ.: Անթիլիաս, 1951, էջ 451, 953 և 957, ուր գրքին անունը նշանակուած է Յաղագս Կազմութեան:

2.— Ստորագութիւնք, Աբիստտէլի, Նախորդին հետ մէկ տուփի մէջ:

Բ.— ԿՈՍՏԱՆԴԻՆ ՔԱՀԱՆԱՅ, մականուն Գուաթ, 1284-ին, Ատանայի Ս. Աստուածածին եկեղեցիին հովանիին ներքեւ, օրինակած է Ս. Ներսէս Շնորհալիի Գրութիւնները, խոշոր բոլորգրով, Կոստիկոսի տէր Պր. Օշիկի համար.— Աճառեան, Յուցակ Ձեռ. Թարգիքի, Վիեննա, 1910, էջ 14:

Գ.— ԽԱՉԱՏՈՒՐ ԳՐԻՉ, 1290-ին օրինակած է մէկ Աւետարան, բոլորգրով.— Մ. Վ. Քէլիչեան, Յուցակ Ձեռ. Ձմառու, 1964, Թ. 17:

Կ'արժէ յիշել այստեղ Ոսկեհեր Քանանան, որ կը ստանայ Նախ Աւետարան մը, 1292-ին, գաղափարուած Գէորգ Վարդապետի ձեռքով (Մաղդիկ Լրագիր, Կ. Պոլիս, 1891, Մարտ 2, էջ 4), և ապա Ծասյի Մարգարէի գիրքը նշանաւոր գրիչ Ստեփանոս Գոյնբերդիացի օրինակութեամբ և Պողոս Առաքելի Թուղթերը՝ Պետրոս Քահանայի զրչութեամբ, 1297-ին, Ս. Ղազարի Տանա-

րիմ համար, զոր ինքը կանոնէլ տուած էր Ատանայի մէջ.— Յուցակ Ձեռ. Ս. Յակոբեանց, Գ. Հատար, էջ 276-8:

Նմանապէս՝ Ատանացի Առաջադրող կրօնաւորը, որ կը ստանայ Դաւիթ Անյաղթի երկերուն ժողովածոն, որուն մէջ ունի հետեւեալ յիշատակարանը. «Արդ որք սպասուողք էք բանի ճշմարիտ բանասիրացն, սուրբ բարունասպեաք և բարունիք և աշակերտեալք և համարէն զսաք նոր Սիոնի, յիշեցէք զամենամեղ հողիկս պիտականուն իմաշատուր կրանաւոր, որ եմ ի գաւառէ Կիլիկեա, ի քաղաքէ Ատանո, և տարաշխարհիկ գոյով յաշխարհի յարեւելք տեսի զայս շարադրութիւն իմաստասիրացն և ցանկացս սմա քանդի բազում իմաստք հաւաքեալ կա ի սմա, և ստացս զսա յիշատակ ինձ և ծնաւոցս իմոց հողեւորացն և մարմնաւորացն և ամենայն գաւառաւոր մերձաւորացն: Եւ յետոյ ի արևաւորին եկեղեաց ի Վանս Սրբոյն Գէորգեան գտի զսակաւ վերջնազօրիկ» ողեալ ետամենին Դաւիթ անյաղթ փիլիսոփայի, և մեկնեալ տիեզերալոյս Կաթողիկոսին Հաոց Տեսան Ներսիսի, և ետու գրել և գաս: Արդ որք աւկոտիք ընթեանյով կամ գաղափար առնելով, յիշեցէք սրտի մտաւք ի սրբամատոյց աղաւթս ձեր, զհամարէն աշխատեալքն ի սմա և դիմ աշարժանութիւնս: և Աստուած ձեզ յիշողացդ և ձեզ յիշողոցս առհասարակ ողորմեացի, ամէն ամէն և եղիցի: Ի ԹՎ. չԱՉ [= 1337] ի յաղոստոս լան գրեցաւ վերջի մանրագծիկս» (Ձեռ. Ս. Յ. Թ. 1291, Թղ. 518բ):

Դ.— ԳՐԻՉՊՐ ԵՐԷՑ, 1605-ին օրինակած է Հաւաքածոյ մը, բոլորգրով, Կիլիկիոյ Յովհաննէս Դ. Անթէպի Կաթողիկոսին համար.— Միտն, 1932, էջ 120:

Ե.— ՄԱՆՈՒԿ ԳՐԻՉ, 1610-ին օրինակած է Ձեռնագրութեան Մաշտոց մը, Ս. Ստեփանոս եկեղեցիին հովանիին տակ.— Կիլիշեքեան Բարպէն Ա. Կաթողիկոս,

Պատմ. Կթղ. Կրթիկերոյ, Անթրիլիսս, 1939, էջ 224: Զեռ. Զմմառու, Թ. 92:

2.— ԱՌԲԱՀԱՄ ԵՐԷՅ, 1639-ին օրինակած է Եարակնոց ժր, Ս. Աստուածածին և Ս. Ստեփանոս եկեղեցիներու հովանիին տակ, Կրթիկերոյ Սիմէոն Բ. Սերաստացի Կաթողիկոսին պատուէրով.— Պատմ. Կթղ. Կրթիկերոյ, էջ 309: Զեռ. Ս. Գ. Թ. 1984:

է.— ՄՈՎԱԷՍ ԴՊԻՐ, ԳՐԻՉ ԵՒ ԿԱԶ-ՄՈՂ, որդի Մահաբեի Պալիէ և Պարտատի, աշակերտ Միքայէլ Քահանայի և Հոսովիւս-ցի Գրիգորի, 1646-ին օրինակած է մէկ Եարակնոց.— Զեռ. Ս. Գ. Թ. 2146:

Ը.— ՍԱՀԱԿ ԳՐԻՉ, 1659-1702, որդի Թորոսի և Հեղինէի, եղբայր Ղազարի, Կերակոսի և Իշխանի. օրինակած է Ատանայի մէջ, Ս. Աստուածածին և Ս. Ստեփանոս եկեղեցիներու հովանիին տակ,

1.— Եարական, բոլոր դրով, 1659-ին, երբ տակաւին դպիր էր.— Սիւրմէեան Ար-տաւազդ Արքեպոս, Յուլիան Զեռ. Հալէպի, Բ. Հատոր, 1936, Հալէպ, էջ 149:

2.— Մաշտոց, 1671-ին, իր քահանայութեան շրջանին, դարձեալ բարձրդիր.— Նոյն, էջ 80:

3.— Մաշտոց և Գանձարան, 1702-ին, բոլորդիր.— Յուլիան, Զեռ. Վիեննայի, Բ. Հատոր, 1963, Թ. 1001:

Թ.— ՍԱՐԳԻՍ ԴՊԻՐ ԱՏԱՆԱՅԻ, ԳՐԻՉ, ՆԿԱՐՈՂ ԵՒ ՄԱԳԱՂԱԹ ՇԻՆՈՂ, որդի Սարգիս Քահանայի և Սառայի, հայր ոսկերչ և գրագիր Ղարաւնի, 1661-ին օրինակած և նկարադարձած է յաջուպէս, իր շինած մազադարձին վրայ, մէկ Եարակնոց, բոլորդիր.— Զեռ. Ս. Գ. Թ. 1230:

Ժ.— ԳՐԻԳՈՐ ԳՐԻՉ, աշակերտ Տէր Միքայէլ Քահանայի, 1679-ին օրինակած է, բոլոր դրով, Ս. Աստուածածին և Ս. Ստեփանոս եկեղեցիներու հովանիին տակ, մէկ Մաշտոց, ի վայելումն Տէր Պետրոսի.— Հանդէս Ամսօրեայ, 1960, էջ 562-3:

Այստեղ կ'աւելցենք նաեւ ժողովածոյ ժր, օրինակուած 1679-ին, Ատանայի Ս.

Աստուածածին եկեղեցիին հովանիին ներքեւ, նորոք դրով, որուն Գրիչը կը մնայ այսօր.— Յուլիան Զեռագրաց Ս. Յակոբեանց, Դ. Հատոր, էջ 122, Թիւ 425:

ԺԱ.— ԻՍԿԷՆՏԷՐ ԴՊԻՐ, ԳՐԻՉ ԵՒ ԿԱԶՄՈՂ, որդի Պողոսի և Ռանժի, Ատանայի մէջ,

1.— Մաշտոց, օրինակած է 1693-ին, բոլոր դրով, ի վայելումն Տէր Յովհաննէսի.— Զեռ. Ս. Գ. Թ. 1382:

2.— Ճաշոց, նորոքած է 1694-ին.— Պատմ. Կթղ. Կրթիկերոյ, էջ 303:

ԺԲ.— ՍԱՐԳԻՍ ԵՐԷՅ ԱՏԱՆԱՅԻ, ԳՐԻՉ, 1724-1751?, որդի Յովհաննէսի և Մարդարտի.— Օրինակած է,

1.— Ժողովածոյ, 1724-ին.— Զեռ. Ս. Թ. 1537:

2.— Սահմանի Իմաստաւիրաբեան, Դաւիթ Անյաղթի, 1734-ին, աստուածարանութեան աշակերտ Տիրացու Մեարոպ Ղալիֆայի պատկանող ձեռագրէն, Ս. Աստուածածին և Ս. Ստեփանոս եկեղեցիներու հովանիին տակ.— Յուլիան Զեռ. Ս. Յակոբեանց, Զ. Հատոր, էջ 33, Թիւ 522:

3.— Մեկնութիւն Երզնայի, Գր. Նարեկացիի, 1737-1751 թուականներուն, Տրովազայի (≈ Ատանա) մէջ, Ս. Աստուածածին և Ս. Ստեփանոս եկեղեցիներու հովանիին տակ.— Պատմ. Կթղ. Կրթիկերոյ, էջ 498: Զեռ. Զմմառու, Թ. 138:

ԺԳ.— ՅԱՐՈՒԹԻՒՆ ԳՐԻՉ, 1727-ին օրինակած է Քարոզգիրի, Զմբան Հատոր, Գր. Տաթեւացիի, Ատանայի Ս. Աստուածածին եկեղեցիին, բոլոր դրով.— Սիւրմէեան, Յուլիան Զեռ. Երուսաղէմի, Ա. Հատոր, Վենետիկ, 1948, էջ 245:

ԺԴ.— ՅՈՎՀԱՆՆԷՍ ԳՐԻՉ, 1744-ին օրինակած է մէկ Պահպանակազիրի (Համալի) ի վայելումն Առաքելի.— Յուլիան Զեռ. Զմմառու, Թ. 260:

Ն. ԵՊՍ. ՄՈՎԱԿԱՆ